# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հուլիսի 2014թվականի N 08

### ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով՝ Մրգավան համայնքի ավագանին

*Որոշում է*

Հաստատել Մրգավան համայնքի ավագանու 04 հերթական նիստի օրակարգը՝

1. Համայնքի 2014թ. բյուջեի եկամուտների առաջին կիսամյակի կատարման մասին:
2. <<Մրգավանի Բ/Ա>> ՓԲԸ-ը <<Մրգավանի Բ/Ա>> ՀՈԱԿ վերակազմավորելու մասին:
3. Նորատունկ այգի հիմնելու պատճառով հողի հարկից ազատելու մասին:
4. Համայնքի ղեկավարի, գյուղապետարանի և <<Մրգավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակների պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:
5. Համայնքի 2014թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԿՈՍՏԱՆ
3. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ
4. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ՄԱՅԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք

ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հուլիսի 2014թվականի N 09

## ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի պահանջներով՝ Մրգավան համայնքի ավագանին

*Որոշում է*

Մրգավան համայնքի 2014թ. բյուջեի եկամուտների առաջին կիսամյակի կատարողականը գնահատել բավարար:

2014թ. համայնքի բյուջեի եկամտային պլանը նախատեսվել է 35534.8 դրամ

Եկամտային պլանը առաջին կիսամյակում կատարվել է 17291.34 դրամ

1. Գույքահարկի տարեկան պլանը նախատեսվել է 3200.0 դրամ

Առաջին կիսամյակում պլանը կատարվել է 1334.14 դրամ

Այդ թվում՝

1) Գույքահարկ կազմակերպություններից նախատեսվել է 100.0 դրամ

Առաջին կիսամյակում պլանը կատարվել է 100.0 դրամ:

2) Գույքահարկ ֆիզիկական անձանցից նախատեսվել է տարեկան 3100.0 դրամ

Առաջին կիսամյակում պլանը կատարվել է 1234.14 դրամ

2. Հողի հարկի տարեկան պլանը նախատեսվել է 4650.0 դրամ

Առաջին կիսամյակում պլանը կատարվել է 2487.9 դրամ

Այդ թվում՝

1) Հողի հարկ ֆիզիկական անձանցից տարեկան պլանը նախատեսվել է 4600.0 դրամ

Առաջին կիսամյակում պլանը կատարվել է 2462.9 դրամ

2) Հողի հարկ կազմակերպություններից տարեկան պլանը նախատեսվել է 50.0 դրամ

Առաջին կիսամյակում պլանը կատարվել է 25.0 դրամ

3. Վարձակալական հողերի վարձավճարի տարեկան պլանը նախատեսվել է 200.3 դրամ

Առաջին կիսամյակում պլանը կատարվել է 200.0 դրամ

4. Տեղական տուրքերի տարեկան պլանը նախատեսվել է 1090.0 դրամ

Առաջին կիսամյակում պլանը կատարվել է 276.0 դրամ

Այդ թվում՝

1) Ծխախոտի վաճառքի թույլտվության վճարի տարեկան պլանը նախատեսվել է 84.0 դրամ

Առաջին կիսամյակում պլանը կատարվել է 21.0 դրամ

2) Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության վճարի տարեկան պլանը նախատեսվել է 96.0 դրամ

Առաջին կիսամյակում պլանը կատարվել է 24.0 դրամ

3) Վառելիքաքսայուղերի վաճառքի թույլտվության վճարի տարեկան պլանը նախատեսվել է 660.0 դրամ

Առաջին կիսամյակում պլանը կատարվել է 188.0 դրամ

4) Ժամը 24:00-ից հետո աշխատանքի թույլտվության վճարի տարեկան պլանը նախատեսվել է 100.0 դրամ

Առաջին կիսամյակում պլանը չի կատարվել

5) Ժամը 24:00-ից հետո աշխատող զվարճանքի օբյեկտների, շահումով խաղեր իրականացնող օբյեկտների աշխատանքի թույլտվության վճարը տարեկան նախատեսվել է 50.0 դրամ

Առաջին կիսամյակում պլանը չի կատարվել

6) Շինարարության թույլտվության տարեկան պլանը նախատեսվել է 100.0 դրամ

Առաջին կիսամյակում պլանը կատարվել է 43.0 դրամ

5. Աղբահանության համար տարեկան պլանը նախատեսվել է 300.0 դրամ

Առաջին կիսամյակում պլանը կատարվել է 13.0 դրամ

6. Դոտացին տարեկան պլանով նախատեսվել է 25944.5 դրամ

Առաջին կիսամյակում պլանը կատարվել է 12972.3 դրամ

7. Համայնքի տարածքում աճուրդ վաճառք կազմակերպելու համար երկրորդ կիսամյակում մուտքագրվել է 8.0դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

2. ԳԱԼՍՏՅԱՆ ԿՈՍՏԱՆ

3. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ

4. ԽՈԻԴԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հուլիսի 2014թվականի N 10

### <<ՄՐԳԱՎԱՆԻ Բ/Ա>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ <<ՄՐԳԱՎԱՆԻ Բ/Ա>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 63-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ մասի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով՝ Մրգավան համայնքի ավագանին

*Որոշում է*

1. <<Մրգավանի Բ/Ա>> փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) վերակազմավորման ձևով վերակազմակերպել որպես <<Մրգավանի Բ/Ա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՈԱԿ):

2. Ընկերության շենքերն ու շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքն ընդունել <<Մրգավանի Բ/Ա>> համայնքային հաշվեկշիռ՝ համաձայն հավելված 1-ի (այսուհետ՝ Հավելված 1):

3. Ընկերության շենքերն ու շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքը համաձայն Հավելված 1-ի անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՈԱԿ-ին՝ դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ Մրգավան համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

4. Ընկերության տնօրինության տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ բացառությամբ շենքի ու շինությունների, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքի, սեփականության իրավունքով

հանձնել ՀՈԱԿ-ին՝ որպես իրավահաջորդի:

5. Հաստատել՝

ա/ ՀՈԱԿ-ի գույքի կազմը՝ համաձայն հավելված 2-ի:

բ/ ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի:

6. Առաջարկել Մրգավան համայնքի ղեկավարին՝ սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել ՀՈԱԿ-ի պետական գրանցումը՝ ընկերության միջոցների հաշվին:

7. Կազմակերպության կառավարման, ինչպես նաև՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «է» ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Մրգավան համայնքի ղեկավարին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

2. ԳԱԼՍՏՅԱՆ ԿՈՍՏԱՆ

3. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ

4. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ՄԱՅԻՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հուլիսի 2014թվականի N 11

## ՆՈՐԱՏՈՒՆԿ ԱՅԳԻ ՀԻՄՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և հաշվի առնելով Մրգավան համայնքում հողամասի սեփականատերերից ստացված դիմումները՝ Մրգավան համայնքի ավագանին

*Որոշում է*

Մրգավան համայնքի ներքոհիշյալ վեց տնտեսություններին նորատունկ այգի հիմնելու պատճառով ազատել հողի հարկից.

1. Նահապետյան Սամվել՝ 0,117 հա վարելահողը դարձել է խաղողի այգի, հարկել 5-րդ տարում
2. Նահապետյան Սարգիս՝ 0,33 հա վարելահողը դարձել է խաղողի այգի, հարկել 5-րդ տարում
3. Դավթյան Ավետիք՝ 0,18 հա վարելահողը դարձել է ծիրանի այգի, հարկել 6-րդ տարում
4. Մեհրաբյան Անժելա՝ 0,226 հա վարելահողը դարձել է ծիրանի այգի, հարկել 6-րդ տարում
5. Հովսեփյան Արայիկ՝ 0,14 հա վարելահողը դարձել է ծիրանի այգի, հարկել 6-րդ տարում
6. Սարգսյան Գալուստ՝ 0,1 հա վարելահողը դարձել է ծիրանի այգի, հարկել 6-րդ տարում
7. Մարգարյան Կարլեն՝ 0,425 հա վարելահողը դարձել է ծիրանի այգի, հարկել 6-րդ տարում

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

2. ԳԱԼՍՏՅԱՆ ԿՈՍՏԱՆ

3. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ

4. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ՄԱՅԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հուլիսի 2014թվականի N 12

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ,ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ <<ՄՐԳԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>>ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ և 8-րդ կետերով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով,հիմք ընդունելով <<Նվազագույն ամսական աշխատավարձի մասին>> Հայաստանի Հանրապետության օրնքի 21.06.2014թ. փոփոխությունը Մրգավան համայնքի ավագանին

*Որոշում է*

1.Հաստատել համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, գյուղապետարանի և <<Մրգավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ աշխատակիցների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հետևյալ ձևով՝

Համայնքի ղեկավար՝ - 173,081 դրամ

*Հայեցողական պաշտոն*

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ 1 - 105,820 դրամ

*Համայնքային ծառայության պաշտոններ*

Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար՝ 1 - 121,730 դրամ

Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ 1 - 111,905 դրամ

Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ 1 - 111,905

դրամ

Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ՝ 1 - 103,400 դրամ

Գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ՝ 1 - 70.822 դրամ

*Պայմանագրային աշխատողներ*

Գրադարանավար՝ 1 - 66,140 դրամ

Գործավար՝ 1 - 66,138 դրամ

Հարկահավաք՝ 1 - 105,820 դրամ

*Տեխսպասարկման անձնակազմ*

Պահակ՝ 1 - 66,138 դրամ

Վարորդ՝ 1 - 79,366 դրամ

Հավաքարար՝ 1 - 66,138 դրամ

*<<Մրգավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ*

Մանկապարտեզի տնօրեն՝ - 120,000 դրամ

Մանկապարտեզի դաստիարակ՝ 1 /0,5 դրույք/ - 70.822 դրամ

Մանկապարտեզի դաստիարակ՝ 1 /0,5 դրույք/ - 70.822 դրամ

Մանկապարտեզի դաստիարակ՝ 1 /0,5 դրույք/ - 70.822 դրամ

Մանկապարտեզի դաստիարակ՝ 1 /0,5 դրույք/ - 66,138 դրամ

Մանկապարտեզի դաստիարակի օգնական՝ 1 - 70.822 դրամ

Մանկապարտեզի դաստիարակի օգնական՝ 1 - 70.822 դրամ

Մանկապարտեզի խոհարար՝ 1 - 66,138 դրամ

Երաժշտության դաստիարակ՝ 1 - 66,138 դրամ

Բուժքույր՝ 1 - 70.822 դրամ

Մանկապարտեզի հաշվապահ՝ 1 - 66,138 դրամ

Հավաքարար` 1 - 66,138 դրամ

Պահակ` 1 - 66,138 դրամ

2.Ուժը կորցրած ճանաչել Մրգավան համայնքի ավագանու 11.12.2013 թվականի թիվ 23 որոշումը:

3.Սույն որոշումը տարածել 2014թ. հուլիսի 1-ով ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

2. ԳԱԼՍՏՅԱՆ ԿՈՍՏԱՆ

3. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ

4. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ՄԱՅԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հուլիսի 2014թվականի N 13

## ՀԱՄԱՅՆՔԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով՝ Մրգավան համանյքի ավագանին

*Որոշում է*

1. Համայնքի 2014թ. վարչական բյուջեի պահուստային ֆոնդ/11.01.02.51/ ծրագրի 4891/պահուստային միջոցներ/ հոդվածից

1.1 Սոցիալապես անապահով անձանց աջակցություն/10.07.01.54/ ծրագրի 4726/հուղարկավորության նպաստ/ հոդվածին հատկացնել 320.0 դրամ:

1.2 Կառավարման մարմնի պահպանում/01.01.01.51/ ծրագրի 4232/ համակարգչային ծառայություններ/ հոդվածին հատկյացնել 160.0 դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԿՈՍՏԱՆ
3. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ
4. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ՄԱՅԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ